ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«7» Դեկտեմբեր 2023 թվականի N: 538-Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 17-ի N:1765-Ն որոշման և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, Գյումրի համայնք տեղափոխված և «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը պատկանող քաղաք Գյումրի, Շիրակացի 21Ա մասնաշենքում տեղակայված անձանց կենցաղն ապահովելու վերաբերյալ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ տնօրենի 2023 թվականի դեկտեմբերի 04-ի թիվ 0905 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 1212 «Տարածքային զարգացում» ծրագրի 12030 «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների տրամադրում» միջոցառմամբ Շիրակի մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցություն կազմակերպելու նպատակով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ Շիրակացի 21Ա մասնաշենքի պատասխանատու, էլեկտրիկ Մանվել Աշոտի Խաչատրյանին /նույնականացման քարտ՝ 000567842, տրված 09.10.2013թ. 016/ հատկացնել 390649 /երեք հարյուր իննսուն հազար վեց հարյուր քառասունինը/ Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը և տասնհինգօրյա ժամկետում ֆինանսական միջոցների ծախսը հավաստող հաշվետվության ներկայացումը:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է